

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

*Նվիրվում է պրոֆեսոր  
Գուրգեն Մելիքյանի 85-ամյակին*

№ 20

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2021

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
արևելագիտության ֆակուլտետի  
գիտական խորհրդի որոշմամբ

**Խմբագրական խորհուրդ՝**

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)

Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր

Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ

Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ

Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր

Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր

Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ

Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ

Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր

Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.

Տեր-Սաթևոսյան Վահրամ պ.գ.դ.

Գրեկյան Երվանդ պ.գ.դ.

Րեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)

Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)

Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)

Իլյա Յակուբովիչ բ.գ.դ., պրոֆեսոր (Գերմանիա)

Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Քննարկի Միոգոյան*

ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ – 85.....7-9

### Արաբագիտություն

*Հայկ Քոչարյան, Մոհամմեդ Հաջ Իբրահիմ*

«ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ.  
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ, ՏԵՍԱԿԱՆ ՈՒ  
ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ»  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ (ՄԱՍ Բ).....10-21

*Մերի Չիլիսիյան*

«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ» ԴՈՒՐԱՆՈՒՄ. IHYĀ’ AL-MAWĀT  
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ.....22-29

*Հարություն Մայժևոյան*

ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՍ  
ՊԱՅՔԱՐՈՒՄ («ԱԼ-ԿԱԻԴԱ»-Ի ՕՐԻՆԱԿՈՎ).....30-39

*Մոհամմեդ Հաջ Իբրահիմ*

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ  
ՇՐՋԱՆԱԿԻ ՄՇԱԿՈՒՄԸ 9/11-ԻՑ ՀԵՏՈ.....40-46

*Համիկ Երիցյան*

ԲԱԶՄԱՍՇԱԿՈՒԹՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ  
ՀԱՆՐԱԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՁԵՎՎՈՐՄԱՆ  
ԳՈՐԾՈՆ (ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՅՅԱԼ ԷՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՕՐԻՆԱԿՈՎ).....47-54

### Թյուրքագիտություն

*Վարուժան Գեղամյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹՈՒՐԹԻԱՅԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ԵՎ ՀՈՏՈՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ 2019-2021ԹԹ.....55-71

*Մարիամ Մելքոնյան*

ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ «ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔՆ» ԻԼՀԱՄ ԱԼԻԵՎԻ ԵԼՈՒՅԹՆԵՐՈՒՄ ..... 72-86

*Ռաֆիկ Խաչատրյան*

1974 թ.-ի ԿԻՊՐՈՍ ԹՈՒՐԶԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐԸ ..... 87-98

*Գառնիկ Դավթյան*

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԸ ԱԴԻԲԵՋԱՆՈՒՄ ..... 99-105

*Թամարա Աղանյայան*

ՊԱՆԹՅՈՒՐՔԻՍՏ ԳՐՈՀԱՅԻՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ. «ԿՈՄԱՆԴՈՍՆԵՐԻ ՃԱՄԲԱՐՆԵՐԻ» ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ, ՆՊԱՏԱԿԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1968-1971 թթ.) ..... 106-117

**Իրանագիտություն**

*Լիանա Պետրոսյան*

ԻԻՀ-ՈՒՄ ԹԱԼԻՇ ՆԱՀԱՆԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԸ Մ. ԱՀՄԱԴԻՆԵՏԱԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ..... 118-123

*Անի Նահապետյան*

ՀՐԵԱՆԵՐԸ ԿՅՈՒՐՈՍ Բ ՄԵԾԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐՁԻՆԻՍ ԿԵՐՊԱՐՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ ..... 124-140

*Նարե Գևորգյան*

ԻԻՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ ԱԼԻ ԱՔԲԱՐ ՀԱՇԵՄԻ ՌԱՖՍԱՆՋԱՆԻԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ..... 141-152

*Յասեր Քարամզադե Հաֆթխանի*

ԹԱԼԻՇԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ..... 153-160

## CONTENT

<i>Knarik Mirzoyan</i> Gurgen Melikyan - 85.....	7-16
---	------

### Arabic Studies

<i>Hayk Kocharyan, Mohammed Haj Ibrahim</i> “PARADIGM OF TERRORISM IN THE 21ST CENTURY: A CRITICAL INVESTIGATION INTO THE DEFINITIONAL, THEORETICAL AND LEGAL FRAMEWORKS ASSOCIATED WITH TERRORISM” SURVEY (PART TWO).....	10-21
--	-------

<i>Meri Chplakhyan</i> «AGRICULTURE» FROM THE PERSPECTIVE OF AL-QUR’AN. DEFINITION OF THE CONCEPT: «IHYĀ’ AL-MAWĀT».....	22-29
--	-------

<i>Harutyun Matevosyan</i> US FOREIGN POLICY CHANGE IN STRUGGLE WITH ISLAMIC EXTREMISM (EXAMPLE OF AL-QAEDA).....	30-39
---	-------

<i>Mohammed Haj Ibrahim</i> EVOLVING LEGAL FRAMEWORKS IN COUNTERING TERRORISM AFTER 9/11.....	40-46
---	-------

<i>Hasmik Yeritsyan</i> MULTICULTURE AS A FACTOR FOR FORMING SOCIOLINGUISTIC SITUATION (EXAMPLE OF THE UNITED ARAB EMIRATES).....	47-54
--	-------

### Turkic Studies

<i>Varujan Geghamyan</i> MAIN THESES OF TURKEY’S STATE DISCOURSE AND RHETORIC ABOUT ARMENIA AND ARMENIANS IN 2019-2021.....	55-71
--	-------

<i>Mariam Melkonyan</i> DEMONSTRATIONS OF ARMENOPHOBIA AND	
---	--

"HATE SPEECH" IN THE TALKS OF ILHAM ALIYEV.....	72-86
<i>Rafik Khachatryan</i> THE CYPRUS TURKISH INVASION OF 1974 AND ITS PRECONDITIONS.....	87-98
<i>Garnik Davtyan</i> AZERBAIJANI ELECTION OVERVIEW.....	99-105
<i>Tamara Aghamalyan</i> PANTURKIST MILITANTS IN TURKEY: THE PROCESS OF FORMULATION, AIMS, ACTIVITY OF THE CAMPS OF COMMANDOS.....	106-117

### **Iranian Studies**

<i>Liana Petrosyan</i> THE DOMESTIC POLITICAL DISCOURSE ON THE FORMATION OF TALYSH PROVINCE IN THE ISLAMIC REPUBLIC OF IRAN DURING THE REIGN OF M. AHMADINEJAD.....	118-123
<i>Ani Nahapetyan</i> JEWS IN THE GREAT POLITICAL PROGRAMS of CYRUS II AND THE LATEST CHARACTER IN "THE BIBLE" .....	124-140
<i>Nare Gevorgyan</i> THE ROLE AND ACTIVITY OF ALI AKBAR HASHEMI RAFSANJANI IN THE ASAMBLEA OF EXPERTS OF PUBLIC ADMINISTRATION OF THE ISLAMIC REPUBLIC OF IRAN.....	141-152
<i>Yaser Karamzadeh Haftkhani</i> AN INVESTIGATION OF THE STRUCTURE OF TALYSHI FOLK POETRY.....	153-160

**1974 Թ.-Ի ԿԻՊՐՈՍ ԹՈՒՐԶԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԵՎ  
ՆՐԱ ՆԱԽԱԳԻՅԱԼՆԵՐԸ**

*Բանալի քառեր՝ Կիպրոս, Հունաստան, Թուրքիա, ՆԱՏՕ, ԽՍՀՄ, ԱՄՆ, «սև գնդապետներ», Մակարիոս III, 1974թ.-ի հեղաշրջումը Կիպրոսում, թուրքական ներխուժում*

1960-ական թթ. կեսերին, Հունաստանում նկատվում էր կառավարական ճգնաժամ: Հանախակի երևույթ էին դարձել կառավարությունների փոփոխությունները և փողոցային պայքարը: Սա էր պատճառը, որ 1967 թ. ապրիլի 21-ի «սև գնդապետների» ռազմական հեղաշրջումը բավական հանգիստ ընդունվեց երկրում: «Սև գնդապետները» չափազանց պահպանողական, հակադեմոկրատական և սուր հակակոմունիստական քաղաքականության կողմնակիցներ էին: Հակակոմունիզմը, որը նրանց գաղափարախոսության հիմքն էր, հակադրվում էր «հունա-քրիստոնեական» գաղափարախոսությամբ<sup>2</sup>: Այս ամենն էր պատճառը, որ չնայած «սև գնդապետների» հակադեմոկրատական բնույթին, ԱՄՆ-ն ի սկզբանե բավական լոյալ էր վերաբերվում հեղաշրջմանը<sup>3</sup>: Հունական խունտան<sup>4</sup> իշխանունության գալու հենց սկզբից, սկսեց ակտիվորեն զբաղվել Կիպրոսի խնդրով, որտեղ 1960-ական թթ. վերջերից, սկսել էր նկատելիորեն անկում ապրել «Էնոզիսի» նկատմամբ հետաքրքրությունը: «Էնոզիսի» գաղափարի նկատմամբ հետաքրքրության անկումը ուներ մի շարք պատճառներ.

1. Կիպրոսն անկախության տարիներին բավական տպավորիչ տնտեսական աճ էր գրանցել, 10 տարում (1960-1971 թթ.) կղզու ՀՆԱ-ն աճել էր ավելի քան 10 անգամ՝ 460 մլն դոլարից հասնելով 4մլդ 750մլն-

<sup>1</sup> ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնի ասպիրանտ, էլ. փոստ՝ rafael.khachatryan77@gmail.com

<sup>2</sup> Круговая Е. Г., "Черные полковники" в Греции. 1967-1974 гг., Новая и новейшая история. 2001, N. 3, <http://vivovoco.astronet.ru/VV/PAPERS/HISTORY/GREECE.HTM>

<sup>3</sup> Foreign Relations of the United States, 1964-1968, Vol. XVI, Cyprus, Greece, Turkey, <https://history.state.gov/historicaldocuments/frus1964-68v16/d284>

<sup>4</sup> զինվորականների խումբ, ովքեր իշխանության են գալիս բռնի ճանապարհով իրականացված հեղաշրջման արդյունքում և որպես կանոն իրականացնում են ավտորիտար կառավարում:

ի<sup>5</sup>: Կիպրոսում մարդիկ շատ արագ հասկացան, որ կղզու անկախությունը միմիայն օգուտ է տնտեսական աճի և նոր հնարավորությունների համար և ամենևին էլ անհրաժեշտություն չկա Հունաստանի հետ միավորվելու համար, որը տնտեսապես զիջում էր իրենց:

2. Կիպրոսի քաղաքական կյանքում էական դեր ուներ կոմունիստական ԱԿԷԼ կուսակցությունը, որը գործում էր ազատորեն օրինական դաշտում՝ ի տարբերություն Հունաստանի կոմունիստական կուսակցության, որն արգելված էր և ենթարկվում էր հալածանքների:

3. Կիպրացիների «Էնոզիսի» գաղափարի նկատմամբ հետաքրքրության անկմանը նպաստում էր նաև Հունաստանում հաստատված «սև գնդապետների» խունտայի հակադեմոկրատական քնույթը:

4. «Էնոզիսի» նկատմամբ վերաբերմունքի անկմանը որոշ չափով նպաստում էր նաև Մակարիոսի անձնական վերաբերմունքը: Մակարիոսը, հավանաբար ելնելով անձնական շահերից, այնքան էլ չէր ցանկանում իր նախագահի պաշտոնը թողնել և դուրս գալ քաղաքականությունից:

«Էնոզիսի» նկատմամբ այս փոփոխությունների ապացույցը դարձավ 1968 թ. փետրվարի նախագահական ընտրությունները, որտեղ «Էնոզիսից» հրաժարվելու կարգախոսով հանդես եկող Մակարիոսը ստացավ 220911 ձայն (մոտավորապես 96%), իսկ իր հիմնական հակառակորդ, «Էնոզիսի» ակտիվ կողմնակից Տակիս Էվդոկասը՝ ընդամենը 8577 ձայն<sup>6</sup>: Այս ամենը բավական ցայտուն կերպով արտահայտում էր կիպրացիների Մակարիոսի քաղաքականության և «Էնոզիսի» գաղափարի նկատմամբ վերաբերմունքը:

Միևնույն ժամանակ, Հունաստանում իշխանության եկած խունտան, ելնելով «սառը պատերազմի» տրամաբանությունից, սկսում է ագրեսիվ քննադատության ենթարկել Մակարիոսին՝ կոմունիստների հետ համագործակցելու և Չեզոք երկրների շարժմանն անդամակցելու համար: Մակարիոսին սկսում են անվանել «Էնոզիսի դավաճան», «միջերկրածովյան Կաստրո», «կարմիր քահանա» և այլն: «Սև գնդապետները», որոնք վարում էին ընդգծված ամերիկամետ

<sup>5</sup> Михеева Н. М., Проблема Кипра в отношениях Турции и Евросоюза: история и современное состояние, Universum: Общественные науки, 2015, N. 4 (14), [https://7universum.com/pdf/social/4\(14\)/Mikheeva.pdf](https://7universum.com/pdf/social/4(14)/Mikheeva.pdf), с. 6.

<sup>6</sup> Cyprus a country study, Edited by Solsten E., Federal Research Division, Fourth Edition, 1993, p. 38.



քաղաքականություն, սկսում են ակտիվացնել ջանքերը՝ ՆԱՏՕ-ի շահերին համապատասխան կիպրական խնդրի կարգավորման ուղղությամբ: Մակարիոսի և խունտայի միջև հարաբերությունները հասկապես սրվում են 1973 թ. նոյեմբերին, խունտայում իշխանություն անցնում է զինվորականների ավելի պահպանողական թեկին՝ Դիմիտրիոս Իոաննիդիսի գլխավորությամբ: Իոաննիդիսի իշխանության գալով Կիպրոսում իրավիճակը կտրուկ փոխվում է: Հունական խունտան կղզում Մակարիոսի հակառակորդներին սկսում է անթաքույց և ակտիվ աջակցություն ցույց տալ:

Մակարիոսն իր հերթին ցանկանալով Կիպրոսում նվազեցնել հունական խունտայի ազդեցությունը, 1974 թ. հուլիսի 2-ին, հունական կառավարությանը տեղեկացնում է, որ որոշել է կրճատել Ազգային գվարդիայի թվաքանակը և պահանջում է, որ հունական սպաները լքեն Կիպրոսի տարածքը: Հունաստանի համար սա նշանակում էր կղզում ազդեցության և վերահսկողության կորուստ, իսկ Կիպրոսի համար՝ ավելի անկաշկանդ արտաքին քաղաքականություն վարելու հնարավորություն: Ինչպես նշում էր ԱՄՆ պետքարտուղար Հենրի Քիսինջերը. «Մակարիոսի այս քայլն ըստ էության հիմնված էր հստակ հաշվարկի վրա: Նա հասկանում էր, որ հունական խունտայի հեղինակությունը մինիմալ է և վստահ էր, որ արևմտյան դաշնակիցներն Աթենքին թույլ չեն տա որևէ վճռական գործողություններ իրականացնել, որի իրավունքը Հունաստանը որպես երաշխավոր ստացել էր Ցյուրիխ-Լոնդոնյան համաձայնություններով: Անգլիական լեյբորիստական կուսակցությունն Աթենքին վերաբերվում էր բավական բացասական, իսկ Թուրքիան միմիայն պետք է ողջուներ Նիկոսիայի այս քայլը, որով նվազեցվում էր Աթենքի ազդեցությունը»<sup>7</sup>:

Սակայն, չնայած այս ամենին, ակնհայտ էր, որ Իոաննիդիսը լրջորեն նախապատրաստվում էր տապալել Մակարիոսի իշխանությունը Կիպրոսում: Ըստ ԱՄՆ-ի դիվանագիտական հաղորդումների, Իոաննիդիսը վաղուց տարված էր կոմունիզմի դեմ պայքարի խնդրով՝ Հունաստանում և Կիպրոսում, և որ Մակարիոսի նկատմամբ նրա ատելությունն ուներ արդեն պաթոլոգիական բնույթ<sup>8</sup>:

1974 թ. հուլիսի 15-ին, Մակարիոսի հուլիս 2-ի պահանջին ի պատասխան, Կիպրոսում տեղակայված հունական զորախումբը,

<sup>7</sup> Рытов А., Разделенный остров Афродиты. Кипр после интеграции в ЕС: новая еврореальность и старые проблемы, Вестник Европы, 2005, N. 13, <https://magazines.gorky.media/vestnik/2005/13/razdelennyj-ostrov-afrodity-kipr-posle-integraczii-v-es-novaya-evrorealnost-i-starve-problemy.html>

<sup>8</sup> Foreign Relations of the United States, 1969-1976, Vol. XXX, Greece, Cyprus, Turkey, 1973-1976, <https://history.state.gov/historicaldocuments/frus1969-76v30/d77>

Ազգային զվարդիան և ԷՕԿԱ-Բ-ի մարտիկները սկսում են նախագահական պալատի գրոհը, որի նպատակը Մակարիոսի սպանությունը և նրա կառավարության տապալումն էր: Մակարիոսին հաջողվում է հրաշքով փրկվել և մինչ խռովարարները հայտարարում էին նրա մահվան մասին, Մակարիոսն արդեն Պաֆոսում էր և ռադիոյով դիմում էր իր կողմնակիցներին: Այս հեղաշրջման ընթացքում, որի ժամանակ տուժեցին ավելի քան 500 անձ<sup>9</sup> (հիմնականում Մակարիոսի աջակիցներից), պարզ դարձավ, որ լավ զինված խռովարարներին Մակարիոսն ի վիճակի չէր ճնշել: Այդ իսկ պատճառով, Մակարիոսը ստիպված էր լքել Կիպրոսը:

Հունական խունտայի կազմակերպած հեղաշրջումը, չնայած իր արկածախնդիր բնույթին, այնուամենայնիվ ուներ մի շարք տրամաբանական հիմքեր.

1. Հունական խունտան, իր հակադեմոկրատական բնույթով և 1973 թ.-ից սկսված տնտեսական ծանր խնդիրների պատճառով (1973 թ. սկսված նավթային ճգնաժամ), չափազանց ցածր հեղինակություն ուներ և՛ երկրի ներսում և՛ միջազգային հարթակում: «Մև գնդապետների» քաղաքականությունը մեծ դժգոհություն էր առաջացրել ՆԱՏՕ-ի անդամ գրեթե բոլոր դաշնակիցների մոտ (բացառությամբ ԱՄՆ-ից): Հունական խունտային, ներքին և արտաքին խնդիրներից շեղելու համար, օդ ու ջրի պես անհրաժեշտ էր արտաքին քաղաքական որևէ հաջողություն, ինչպես օրինակ Կիպրոսի միավորումը:

2. Կոմունիզմի դեմ պայքարի համատեքստում, «սև գնդապետները», որպես գաղափարական հիմք, վերցրել էին ազգայնականությունը, որը նույնպես նպաստում էր Կիպրոսի նկատմամբ ագրեսիվ, արկածախնդիր գործողությունների իրականացմանը:

3. Բացի այս ամենից, 1974 թ. հարաբերությունները Թուրքիայի հետ արդեն իսկ բավական սրվել էին՝ կապված Էգեյան ծովի խնդրի հետ: Կիպրոսի հետ միավորվելով, հունական խունտան Թուրքիայի նկատմամբ կստանար Էսկան ստրատեգիական առավելություն: Հաշվի առնելով ռազմական տեսանկյունից Կիպրոսի հարմար ստրատեգիական դիրքը, հունական խունտան հույս ուներ Թուրքիային ստիպել մեղմացնել իր նկատմամբ խնդրահարույց քաղաքականությունը:

<sup>9</sup> Cyprus a country study, Edited by Solsten E., Federal Research Division, Fourth Edition, 1993, p. 218.

4. «Սև գնդապետների» կիպրական արկածախնդրությունում կարևոր դեր ուներ նաև տնտեսական բաղադրիչը: Հունաստանը, որը հանդիպել էր էական ֆինանսական դժվարությունների հետ, տնտեսապես զարգացած Կիպրոսի միավորումով փորձում էր լուծել նաև այդ խնդիրները:

Կիպրոսում տեղի ունեցած հեղաշրջումը միջազգային հարթակում հատկապես կոշտ կերպով դատապարտեց Թուրքիան: Թուրքիայում բավական արագ հասկացան, որ «սև գնդապետների» միջազգային հարթակում և Կիպրոսում ունեցած ցածր հեղինակության շնորհիվ, ստացել են բավական բարենպաստ հնարավորություն՝ առանց լուրջ խոչընդոտների հանդիպելու, զենքով լուծելու կիպրական խնդիրը: Թուրքական ներխուժումը Կիպրոս, ըստ էության, ուներ մի շարք հիմնավոր պատճառներ.

1. Հունաստանի հետ Թուրքիայի աշխարհաքաղաքական խնդիրներն ամենևին էլ չէին սկսվել Կիպրոսով և միայն Կիպրոսով էլ չէին սահմանափակվում: Այսպես օրինակ, դեռևս 1973 թ., հունական Թասոս կղզու մոտ հայտնաբերվել էր նավթային հանքավայր, որի պատկանելության և մայրցամաքային շելֆի բաժանման խնդիրը բավական սրել էր Հունաստանի և Թուրքիայի հարաբերությունները<sup>10</sup>: Հաշվի առնելով թուրք-հունական մրցակցությունը, Կիպրոսը նույնպես իր աշխարհագրական դիրքի շնորհիվ ստրատեգիական մեծ կարևորություն ուներ: Եթե կղզին անցներ Հունաստանին, ապա այն շատ հեշտությամբ կարող էր վերահսկել Թուրքիայի հարավային կարևոր նավահանգիստներ՝ Մերսինը և Ալեքսանդրետը, ցանկության դեպքում նույնիսկ կարող էր Թուրքիայի համար ընդհանրապես փակել դեպի Միջերկրական ծով ելքը: Սրա համար էր, որ Թուրքիային անհրաժեշտ էր գոնե Կիպրոսի հյուսիսային ափի նկատմամբ վերահսկողություն սահմանել:

2. Կիպրոսի թուրքական համայնքի խնդիրները, սկսած 1950-ական թթ. կեսերից, կարևոր նշանակություն էին ձեռք բերել Թուրքիայի ներքին կյանքում: Կիպրական խնդրի վերաբերյալ ցանկացած զարգացում բավական սուր էր ընդունվում թուրքական հասարակության կողմից և միշտ ուշադրության կենտրոնում էր: Թուրքիայի իշխանություններն օգտագործելով Կիպրոսի թուրքական համայնքի խնդիրները ներքին քաղաքականության մեջ, բավական երկար էին ազգայնական տրամադրություններ գեներացրել, ինչը նույնպես անհետևանք չէր մնացել:

<sup>10</sup> Улуян А. А., Политическая история современной Греции: Конец 18 в. - 90-е гг. 20в., М., 1998, с. 286.

3. Կարևոր դեր էր կատարում նաև այն, որ թուրքական գեներալիտետն ուներ Կիպրոս մասնակի ներխուժման փորձ, ինչպես նաև իր տրամադրության տակ կային դեսանտային գործողությունների պատրաստ հատուկ ուժեր<sup>11</sup>: Ռազմական ասպարեզում Թուրքիան անհամեմատ ուժեղ էր Հունաստանից, սա էր պատճառը, որ գեներալիտետը երկար ժամանակ է, ինչ Կիպրոս ռազմական ներխուժումը անհրաժեշտություն էր համարում:

Թուրքիան հեղաշրջմանը բավական արագ արձագանքեց նաև դիվանագիտական ճակատում: Արդեն հուլիսի 17-18-ը, Թուրքիայի վարչապետ Բ. Էջլիթը մեկնեց Լոնդոն, որտեղ հանդիպումներ ունեցավ Մեծ Բրիտանիայի իր գործընկեր Հ. Վիլսոնի և ԱՄՆ-ի պետքարտուղարի Մերձավոր Արևելքի և Հարավային Ասիայի գծով տեղակալ Ջ. Միսկոյի հետ: Էջլիթը փորձում էր, համաձայն «Երաշխիքների մասին» պայմանագրի, համոզել իր բրիտանացի գործընկերոջը Կիպրոսում սկսել բրիտանա-թուրքական գործերի համատեղ գործողություն՝ կղզում «կարգը» վերականգնելու նպատակով: Սակայն, պաշտոնական Լոնդոնը կողմ չէր ուժի կիրառմանը և խնդիրն առաջարկեց լուծել դիվանագիտական ճանապարհով:

Թուրքական կառավարությունը, կիպրական նոր ճգնաժամի ֆոնին, բավական ակտիվ աշխատում էր նաև ԽՍՀՄ-ի հետ, որը նույնպես չափազանց դժգոհ էր «սև գնդապետների» գործողություններից և ԽՍՀՄ-ի հետ լավ հարաբերություններ ունեցող Մակարիոսի տապալումից: Հուլիսի 15-ին, Անկարայում ԽՍՀՄ դեսպան Վ. Գրուբյակովը հանդիպում է ունենում Թուրքիայի նախագահ Ֆ. Բորությունքի հետ: Հանդիպման ժամանակ Գրուբյակովը Քորությունքին տեղեկացնում է, որ Մոսկվան պատրաստ է աշխատել Անկարայի հետ՝ Կիպրոսի անկախությունը և ամբողջականությունը պաշտպանելու նպատակով: Մամուլի համար հաղորդագրությունում Գրուբյակովը նշել էր, որ «ԽՍՀՄ-ն աջակցում է բոլորին, ովքեր կռվում են խռովարարների դեմ»<sup>12</sup>: Այս հանդիպումն ու հայտարարությունը ցույց էին տալիս, որ ԽՍՀՄ-ը, Մակարիոսի տապալումից հետո, ամենևին էլ չէր խոչընդոտի Կիպրոսում Թուրքիայի, ընդդեմ «սև գնդապետների», հնարավոր ներխուժմանը:

<sup>11</sup> Поцхверия Б. М., Внешняя политика Турции после второй мировой войны, М., 1976, с. 240.

<sup>12</sup> Drousiotis M., Soviet duplicity in the Cyprus crisis, <https://cyprus-mail.com/2014/07/20/soviet-duplicity-in-the-cyprus-crisis/>

Այսպիսով, միջազգային բարենպաստ իրադրությունը և իր հնարավորությունները հաշվի առնելով, Թուրքիան 1974 թ. հուլիսի 20-ին սկսում է Կիպրոս ներխուժումը, որն ի սկզբանե բացատրվում էր թուրք-կիպրացիների իրավունքները պաշտպանելու և համաձայն «Երաշխիքների մասին» պայմանագրի, Կիպրոսում «օրինականությունը» վերականգնելու անհրաժեշտությամբ:

Կիպրոսում գտնվող հունական ուժերը, ինչպես նաև կիպրական Ազգային զվարդիան, չնայած դիմադրությանը, ստիպված էին նահանջել: Կիպրոսում գտնվող ուժերն ըստ էության անկարող էին դիմակայել թուրքական բանակին, իսկ հաշվի առնելով հունական բանակի ռազմական ներուժը և հեռավորությունը, չէին կարող օգնություն ակնկալել Հունաստանից:

Թուրքիայի Կիպրոս ներխուժելուց հետո, դեռևս հուլիսի 20-ին, ՄԱԿ-ի Անվտանգության Խորհուրդն ընդունել էր 353 բանաձևը<sup>13</sup>, որով կողմերից պահանջում էր անհապաղ դադարեցնել կրակը, վերականգնել սահմանադրական կարգը, ինչպես նաև Կիպրոսից դուրս բերել բոլոր օտարերկրյա զորքերը: Սակայն, հրադադար հաստատվեց և ռազմական գործողությունները դադարեցվեցին միայն հուլիսի 22-ին, երբ թուրքական կողմի հիմնական նպատակներն արդեն իրականացված էին: Հրադադարի պահին թուրքական բանակի տիրապետության տակ էին հայտնվել արդեն կղզու տարածքի 7%-ը<sup>14</sup>:

Թուրքիան իր ներխուժումը բավական լավ էր հաշվարկել նաև ԱՄՆ-ի հնարավոր հակազդեցության տեսանկյունից: Վաշինգտոնը, թուրքական ռազմական ներխուժումը զսպելու համար, չէր կարող նորից կրկնել դիվանագիտական աղետը, որը ստեղծվել էր 1964 թ.-ին, հայտնի «Չոնսոնի նամակից» հետո և որի արդյունքն էր դարձել Թուրքիայիում հակամերիկյան ալիքը: Բացի դրանից, ԱՄՆ-ի նախագահ Ռ. Նիքսոնը զբաղված էր Ուոթերգեյթի սկանդալով և ի վիճակի չէր անձնական ուժեղ դեր խաղալ<sup>15</sup>:

Կիպրոսում տեղի ունեցած իրադարձությունները և հունական կողմի փաստացի ձախողումն իրենց ազդեցությունն ունեցան Հունաստանի ներքին կյանքի վրա ևս: Հուլիսի 23-ին տապալվեց «սև գնդապետների» ռեժիմը, որոնց հետ միասին տապալվեց նաև նրանց դրածո ռեժիմը Կիպրոսում: Հուլիսի 24-ին, Հունաստանը գլխավորելու համար, նախագահ Գիզիկիսի հրավերով, մոտ 12 ամյա էմիգրացիայից

<sup>13</sup> Резолюция 353 (1974) от 20 июля 1974 года, [https://undocs.org/ru/S/RES/353\(1974\)](https://undocs.org/ru/S/RES/353(1974))

<sup>14</sup> Balci T., The Cyprus Crisis and the Southern Flank of NATO (1960-1975), International Review of Turkish Studies, U., 2012, Vol 2 (3), p. 49.

<sup>15</sup> Dodd C., նշված աշխ., էջ 109.

հետո, Փրանսիայից Հունաստան վերադարձավ հայտնի քաղաքական գործիչ և նախկին վարչապետ Կոնստանտինոս Կարամանլիսը<sup>16</sup>:

Համաձայն ՄԱԿ-ի ընդունած 353 բանաձևի, 1974 թ. հուլիսի 25-30-ը, Ժնևում հրավիրվում է Կիպրոսի խնդրով առաջին կոնֆերանսը, որին մասնակցում էին Հունաստանի, Թուրքիայի և Մեծ Բրիտանիայի արտգործնախարարներ Գ. Մավրոսը, Ս. Գյունեշը և Ջ. Կալագենը: Կոնֆերանսն ընթանում էր բավական լարված մթնոլորտում: Թուրքիան, չնայած հրադադարին, շարունակում էր ակտիվորեն գործեր և ծանր գրահատեխնիկա փոխադրել Կիպրոս: Հուլիսի վերջին, թուրքական զինված ուժերի թվաքանակը Կիպրոսում հասնում էր 25-30 հազարի, որոնց տրամադրության տակ կային արդեն ավելի քան 200 տանկեր<sup>17</sup>: Բավական սուր խնդիր էր նաև հրադադարի ռեժիմի պահպանումը, որը հիմնականում թուրքական գործերի կողմից խախտվում էր: Թուրքական կողմն օգտագործելով իր ռազմական առավելությունը և Հունաստանում ու Կիպրոսում տիրող քաղաքական և ռազմական խառնաշփոթը, անընդհատ առաջ էր քաշում Կիպրոսի համայնքների աշխարհագրական բաժանման վրա հիմնված, թույլ կենտրոնով դաշնության սկզբունքը: Հունական կողմը դեմ էր համայնքների աշխարհագրական բաժանմանը, սակայն, վերջիվերջո բանակցությունների ավարտական հայտարարությունով, փաստացի ընդունում է Կիպրոսում երկու ինքնավար համայնքային կառավարչությունների գոյության փաստը<sup>18</sup>: Սա, ըստ էության, Թուրքիայի դիվանագիտական հաղթանակը և բանակցություններում թուրքական կողմի առավել ուժեղ դիրքերի արտացոլումն էր:

Ժնևում բանակցությունների երկրորդ փուլն ընթացավ օգոստոսի 8-14-ը, որում բացի Հունաստանի, Թուրքիայի և Մեծ Բրիտանիայի արտգործնախարարներից, մասնակցում էին նաև Կիպրոսի թուրքական համայնքի ղեկավար Ռ. Դենքթաշը և կղզու հունական համայնքի ղեկավար ու նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Կիրիդիսը: Բանակցությունների այս փուլում թուրքական պահանջներն ավելի էին կոշտացել ու ավելի շուտ վերջնագրի էին նմանվել: Բանակցությունների ընթացքում Դենքթաշը ներկայացնում է իր ծրագիրը, որով պետք է վերանայվեր կղզու

<sup>16</sup> Улуян А. А., Политическая история современной Греции: Конец 18 в. - 90-е гг. 20в., М., 1998, с. 288.

<sup>17</sup> Поцхверия Б. М., Внешняя политика Турции после второй мировой войны, М., 1976, с. 243

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 246:

սահմանադրությունը և ստեղծվել էր դաշնային կառավարման համակարգ՝ հիմնված հետևյալ հիմնարար սկզբունքների վրա.

1. Կիպրոսի հանրապետությունը պետք է դառնար անկախ երկազ պետություն:

2. Հանրապետությունը պետք է կազմված լինել երկու լիարժեք ինքնավար և համապատասխան աշխարհագրական սահմաններով դաշնային նահանգներից:

3. Իրավասությունների սահմանումը պետք է թողնվել դաշնային կառավարությանը, իսկ դաշնային իրավասությունները պետք է իրականացվեին համապատասխան պետության երկազ բնույթին:

4. Թուրք-կիպրական դաշնային նահանգը պետք է ներառել հանրապետության տարածքի 34%-ը և տեղակայվել հյուսիսում, սկսվելով Լիմնիտիս-Լեֆկա շրջանից, այնուհետև դեպի արևելք պետք է անցներ Նիկոսիայի թուրքական վերահսկողության տակ գտնվող շրջանով և ավարտվել Ֆամագուստայի թուրքական մասով ու նավահանգստով<sup>19</sup>:

Հունական կողմն ըստ էության չէր կարող ընդունել այս պայմանները: Մավրոսը և Կիրիդիսը փորձում են փոքր դադար վերցնել և պայմանավորվել բանակցությունների երրորդ փուլի վերաբերյալ, ինչին դեմ էր թուրքական կողմը, որը փորձում էր պարտադրել իր պայմանները:

Թուրքական կողմը, իր նպատակներին դիվանագիտական ճանապարհով չհասնելով, ամենևին էլ չէր փորձում նահանջել: Դեռևս 1974 թ. հուլիսի 24-ին, «Ջումհուրիյեթ» թերթի տպագրված հարցազրույցում, Թուրքիայի վարչապետ Էջևիթն ասել էր. «Մեկդարյա կարոտն ավարտվեց և Կիպրոսի թուրքերը խավարից դուրս եկան, որպեսզի այլևս երբեք այնտեղ չվերադառնան»<sup>20</sup>: Սա ցույց էր տալիս, որ Թուրքիան կիպրական հարցում ի սկզբանե տրամադրված էր բավական վճռական: Թուրքիայում հասկանում էին, որ միջազգային դրությունը շարունակում է մնալ իրենց օգտին և նրանց նոր ռազմական գործողությունը Կիպրոսում նույնպես լուրջ միջազգային հակազդեցության չի հանդիպի:

1974 թ. օգոստոսի 14-16-ը, Թուրքիան Կիպրոսում սկսում է իր երկրորդ «խաղաղարար» գործողությունը, որն իսկական ողբերգություն է դառնում կղզու հունական բնակչության համար:

<sup>19</sup> Asmussen J., Cyprus At War: Diplomacy and Conflict during the 1974 Crisis, L. and N. Y., 2008, p. 201.

<sup>20</sup> Güler E., Basında Rauf Raif Denктаş ve Kıbrıs Mücadelesi, Bayterek International Journal of Academic Research, c. 2, s. 1, 2020, s. 109.

Ռազմական գործողության հետևանքով, թուրքական օկուպացիայի տակ են հայտնվում կղզու տարածքի 36,2%<sup>21</sup>: Թուրքիան, ըստ էության, հասնում է իր պահանջների բավարարմանը ռազմական ճանապարհով: Ռազմական գործողությունների հետևանքով, ի վերջո, իրականություն է դառնում նաև Թուրքիայի համար այդքան ցանկալի համայնքների աշխարհագրական բաժանումը:

Չնայած, Թուրքիայի այս գործողությունն ընդհանրապես չէր տեղավորվում կղզում «օրինականությունը» վերականգնելու տրամաբանության մեջ և բացահայտ խախտում էր միջազգային նորմերն ու պայմանավորվածությունները, գերտերությունները բավական զուսպ արձագանքեցին: Այս իրավիճակը բավական ձեռնտու էր ԽՍՀՄ-ին: ՆԱՏՕ-ի երկու անդամ երկրները, ըստ էության, կանգնած էին միմյանց դեմ պատերազմի իրական վտանգի առաջ, ինչը սպառնում էր քայքայել ՆԱՏՕ-ի հարավ-արևելյան ճակատը ներսից: Բացի սրանից, այս լարվածության ֆոնին, Թուրքիայում, Հունաստանում և Կիպրոսում, մեծ թափով աճում էին հակաամերիկյան տրամադրությունները: Կիպրոսում հակաամերիկյան տրամադրությունների գագաթնակետը դարձավ օգոստոսի 19-ի առավոտյան, կղզում ԱՄՆ-ի դեսպանատան վրա հարձակումը, որի ընթացքում սպանվեց ԱՄՆ դեսպան Ռ. Դ. Դեյվիսը և ևս մեկ աշխատող<sup>22</sup>:

ԱՄՆ-ն իր հերթին բավական չափավոր էր թուրքական ներխուժման հարցում, քանի որ ակտիվ ներգրավումը սպառնում էր էլ ավելի սրել ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունները և նոր խթան հանդիսանալ խորհրդա-թուրքական մերձեցման համար: Չնայած սրան, ԱՄՆ-ի Կոնգրեսը Հունաստանին գոհացնելու համար, 1975-1978 թթ., Թուրքիային սպառազինության վաճառքի ու ռազմական օգնության վրա արգելանք դրեց, ինչը զգալիորեն ազդեց թուրքական բանակի պատրաստվածության մակարդակի վրա<sup>23</sup>:

Թուրքական ներխուժման հետևանքներն անբուժելի հետք թողեցին կղզու հետագա ճակատագրի վրա: Դարերով, իրար հետ կողք-կողքի բնակված հունական ու թուրքական համայնքների շատ ներկայացուցիչներ դարձան փախստական: Ըստ բրիտանական

<sup>21</sup> Embassy of The Republic of Cyprus in Moscow, Cyprus Question, [http://www.mfa.gov.cy/mfa/embassies/embassy\\_moscow.nsf/moscow\\_embassy16\\_en/moscow\\_embassy16\\_en?OpenDocument](http://www.mfa.gov.cy/mfa/embassies/embassy_moscow.nsf/moscow_embassy16_en/moscow_embassy16_en?OpenDocument)

<sup>22</sup> Asmussen J., Cyprus At War: Diplomacy and Conflict during the 1974 Crisis, L. and N. Y., 2008, p. 246.

<sup>23</sup> Հովսեփյան Լ., Թուրքիայի պաշտպանական համակարգի արդիականացումը և անվտանգության ոլորտի բարեփոխումները, Ե., 2014, էջ 28:



աղբյուրների, փախստականներ և տեղահանված անձիք դարձան 150 հազար հույն և 60 հազար թուրք-կիպրացիներ, ըստ հունական աղբյուրների, հույն փախստականների թիվը հասնում էր 200, իսկ թուրքերինը՝ 30 հազարի: Մարտական գործողությունների հետևանքով, ընդհանուր առմամբ սպանվեցին 6 հազար զինվորներ, իսկ անհետ կորած դարձան 1468 հույն և 502 թուրք-կիպրացիներ<sup>24</sup>:

Բացի մարդկային կորուստներից, ահռելի էին նաև Կիպրոսի հանրապետության կրած նյութական վնասները: 1974 թ. իրադարձությունների հետևանքով, ընդհանուր տնտեսական վնասը գնահատվում է 173 մլն կիպրական ֆունտ, որը գերազանցում էր երկրի ավելի քան տասնամյա ազգային եկամուտը<sup>25</sup>: Կիպրոսի հյուսիսի օկուպացիայի արդյունքում, թուրքերին անցավ երկրի առավել զարգացած մասը ներառյալ ափի 57%-ը, կղզու տնտեսական պոտենցիալի 70%-ը, արդյունաբերական ձեռնարկությունների ավելի քան 50%-ը, բնական հարստությունների 60%-ը, ընդհանուր մշակվող հողերի 65%-ը և տուրիստական ենթակառուցվածքների 73%-ը<sup>26</sup>: Թուրքական կողմում մնաց նաև Կիպրոսի կարևորագույն նավահանգիստը՝ Փամագուստան, որը սպասարկում էր կղզի եկող բեռների 83%-ը<sup>27</sup>: Թուրքական գործողությունների հետևանքով, «մեռյալ գոտում» հայտնվեց և մինչ օրս լքված է Կիպրոսի երբեմնի ամենահայտնի տուրիստական կենտրոն Վարոշան:

Ընդհանուր առմամբ, վերլուծելով 1974 թ. Կիպրոս թուրքական ներխուժումը և նրա նախադրյալները, կարող ենք հստակ նկատել այս ամենի վրա Հունաստանում տեղի ունեցած «սև գնդապետների» հեղաշրջման ազդեցությունը: «Սև գնդապետները», չնայած տնտեսական որոշ հաջողությունների, արտաքին քաղաքականության մեջ բավական անփորձ էին ու արկածախնդիր:

«Սև գնդապետները», կիպրական հարցում վարելով ակտիվ քաղաքականություն, ըստ էության հաշվի չէին առել, որ ի տարբերություն նախորդ տասնամյակի, Կիպրոսում նկատելիորեն փոփոխվել էին «էնդզիսի» նկատմամբ տրամադրությունները և այն այլևս մեծ ժողովրդականություն չէր վայելում: Չնայած սրան, իրականություն հետ «սև գնդապետները» ոչ միայն հաշվի չէին նստում,

<sup>24</sup> Гаджиев Ф., Независимость де-факто: Турецкая Республика Северного Кипра, М., 2008, с. 57.

<sup>25</sup> Егоров Б. Г., Кипр: тревоги и надежды, М., 1986, с. 20.

<sup>26</sup> Коппитерс Б., Эмерсон М., Хейссен М., Ковзиридзе Т., Нутчева Г., Точки Н., Валь М., Европеизация и разрешение конфликтов: конкретные исследования европейской периферии, М., 2005, с. 79.

<sup>27</sup> Гаджиев Ф., նշված աշխ., էջ 58.

այլ իրենց ազրեսիվ գործողություններով անկայունություն էին ստեղծում կղզում, ինչը խոչընդոտ էր հանդիսանում կղզու ապագայի վերաբերյալ միջհամայնքային բանակցությունների համար:

«Սև գնդապետներն» իրենց վերահսկողության տակ վերցնելով Կիպրոսի զինված ուժերը, արտաքին քաղաքական ասպարեզում փորձում էին նվազեցնել կիպրական կառավարության դերը՝ կիպրական հարցը նմանեցնելով Հունաստանի և Թուրքիայի միջև սահմանային վեճի: Ըստ էության, Կիպրոսում հեղաշրջում կազմակերպելու հունական խունտայի արկածախնդրությունը նույնպես պետք է դիտել այս հարթության մեջ:

Հունական արկածախնդրությունը սակայն ժամանակային առումով բավական սխալ էր ընտրված, այն հաշվի չէր առել միջազգային դրության փոփոխությունները և օբյեկտիվ իրողությունը, որից բավական հմտորեն օգտվեց Թուրքիան: Այս ամենն էր պատճառը, որ նույնիսկ Կիպրոս թուրքական երկրորդ ներխուժման ժամանակ, չնայած Թուրքիայի կողմից միջազգային պայմանավորվածությունների բացահայտ խախտմանը, միջազգային հանրությունը թուրքական ներխուժումը կանխելու ուղղությամբ ակտիվ քայլեր չձեռնարկեց:

## THE CYPRUS TURKISH INVASION OF 1974 AND ITS PRECONDITIONS

*Rafik Khachatryan*  
(Summary)

With the coup of 1967 on the 21<sup>st</sup> of April in Greece, Black colonels came to power, who took the way of fierce struggle for Enosis in the Cyprus question. In contrast to it, in Cyprus, the idea of Enosis noticeably lose its attractiveness. The opposition between the Cyprus government and Black colonels soon turned into a severe struggle, the top of which became the coup of 1974 on the 15th of July against Makarios. Using the existing problems in the relations between Greece-Cyprus as well as the convenient situation in the International field Turkey got a historical opportunity to invade Cyprus and to fortify its position in Eastern Mediterranean.